ԹՎՈՒՄ Է, ԹԵ ՕԴՈՒՄ ԿԱԽՎԱԾ ԳՄԲԵԹԸ ՀԵՆԱՐԱՆ ՉՈՒՆԻ

Ինչպես հայտնի է, քրիստոնեության 1700 ամյակի առթիվ Սբ. Էջմիածնի Մայր Աթոռի որոշմամբ Երևանում կառուցվելու է Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի:

1992 թ. հոկտեմբերի 8-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում հանգուցյալ Հայրապետի մասնակցությամբ տեղի ունեցավ Երևանում կառուցվելիք Մայր եկեղեցու մրցութային հանձնաժողովի նիստը Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, պրոֆեսոր, մրցութային հանձնաժողովի նախագահ Վ. Հարությունյանի, Գ. Խանջյանի, Ռ. Ջուլհակյանի, Ջ. Թորոսյանի, Բ. Արզումանյանի, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Մ. Մինասյանի մասնակցությամբ: Մրցույթին ներկայացված 33 նախագծերից հանձնաժողովի անդամները հավանություն տվեցին ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանի նախագծին: Սակայն մտավորականության որոշ շրջանակներում կան անհամաձայնության շշուկներ այս որոշման կապակցությամբ: Ու թեև որոշումն ընունվել է, սակայն ավելորդ պատահականություններից խուսափելու միտումով Ձեզ ենք ներկայացնում ՀՀ վաստակավոր շինարար, ճարտարապետության դոկտոր *Տիրան Մարությանի* հետ մեր թղթակից Ռուզան Մինասյանի զրույցը:

- Այս ի՞նչ է, եկեղեցի է՞, պրն Մարության: Խնդրում ենք համառոտ ներկայացրեք եկեղեցու կառուցման նախապատմությունը, քանի որ որոշ տեղեկություններ մենք ստացել ենք պրոֆ. Վ. Հարությունյանի «Խորան լուսո և հավատքի» հոդվածից, տպագրված «Էջմիածին» հանդեսում:

- 2001 թ. Հայաստանում քրիստոնեության 1700-ամյակը հավերժացնելու համար Ծայրագույն պատրիարք, հանգուցյալ կաթողիկոս Վազգեն Ա-ն աստվածահաճո որոշում էր հղացել Երևանում կառուցել Մայր եկեղեցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ անունով՝ Զվարթնոցի ճարտարապետությամբ: Հավանություն տալով Զվարթնոցի

Թորոս Թորամանյանի վերակազմության նախագծին, նրա հանձնարարությամբ Մայր Աթոռի ճարտարապետական բաժինը դեռևս 1989 թ. մասնագիտական քննության ենթարկելով, լիակատար հավանության արժանացրեց գծագրական ողջ նյութը, հանձնարարելով արևելակողմի ուղղանկյուն հատակագծով հատվածում նախատեսել լրացուցիչ սենյակներ անձնակազմի պահանջները բավարարելու համար, որը և իրականացվեց ժամանակին։ Մայր Աթոռի ճարտարապետական բաժնում քննարկմանը մասնակցում էին՝ նախագահ, ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը, նկարիչ Գրիգոր Խանջյանը, ճարտարապետներ Արծրուն Գալիկյան ը, Գրիգոր Ղաֆադարյանը… Թորամանյանի նախագիծը քննարկման ներկայացրեցի ես։

Այս լուրը մեծ արագությամբ տարածվեց մայրաքաղաքում, առաջացնելով մեծ հետաքրքրություն։ Այն առայսօր շարունակվում է, քանի որ շատերը չգիտեն, որ այդ գործը ինչ-ինչ առիթներով խափանվել է, շարունակվելով մի այլ սցենարով։

Կարճ ժամանակ անց հայտնի դարձավ, որ Հայաստանի նախարարների խորհրդին առընթեր կրոնի գործերի խորհուրդը նպատակահարմար է համարել հայտարարել մրցույթ նոր նախագիծ ստեղծելու համար։ Այդպիսով, չեղյալ համարվեց նախորդ որոշումը Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցումը Զվարթնոցի ճարտարապետությամբ իրականացնելու մասին։

Մեր բոլոր նախազգուշացնող բացատրություններն այդ քայլի հետևանքների վերաբերյալ, որ կլինի 2-3 տարվա կորուստ, թե Զվարթնոցից առավել հաջող և, նույնիսկ ժամանակակից նախագիծ չի հաջողվի ստանալ, որ կառուցումը կկասեցվի, արդյունք չտվին։ Կաթողիկոսի ցանկությամբ առաջնորդվելու դեպքում, անցած վեց տարիներին մենք արդեն կունենայինք Զվարթնոցի կրկնօրինակը կանգուն վիճակում, գրեթե ավարտված։ Դա կնշանակեր ժողովրդի մի նոր վերածնունդ, մի մեծ նվաճում, մեր հնադարյան հոգևոր մշակույթի յուրովի պահպանման պատվաբեր ցուցադրություն։

- Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը մրցույթի արդյունքների վերաբերյալ, կա՞ անհամաձայնություն, և ինչու՞: Ինչպիսի՞ն է Ձեր մասնագիտական կարծիքը մրցութային հանձնաժողովի հավանությանն արժանացած ճարտարապետ Ստ. Քյուրքչյանի նախագծի վերաբերյալ:

- Կառուցվելիք Մայր եկեղեցու վերաբերյալ մեր տրամադրության տակ են եկեղեցու հատակագիծը և արևմտյան ճակատը՝ հրապարակված ձեր հիշատակված «Էջմիածին» հանդեսի 1993 թ. 1-3 միացյալ համարում պրոֆ. Վարազդատ Հարությունյանի «Խորան լուսո և հավատքի» հոդվածում (էջ 49-52), ինչպես և Երևանում 1995 թ. հոկտեմբերին տեղի ունեցած ճարտարապետների համահայկական ֆորումի նյութերի ցուցահանդեսում ներկայացված գծագիրը (հատակագիծ, արևմտյան ճակատ և կտրվածք 1:100 և 1:200 մասշտաբով): Հիշյալ նյութերից ստացվում է այն նույն տպավորությունը, ինչպիսին ստացել է նախագծերի մրցույթի ժյուրին, մասնավորապես պրոֆ. Վ. Հարությունյանը. «Եկեղեցին հասարակական շենքի ընկալում ունի»:

Եկեղեցու հատակաձևը հետևանք է խաչաձևող կամարների համակարգով ստեղծված ծածկաձևի, որպիսիք կարող են լինել ամեն կարգի ու նշանակության շինություններ՝ շուկա, բորսա, հասարակական հավաքների սրահ, մրցույթների ասպարեզ, ցուցահանդես, բայց ոչ եկեղեցի: Մեր օրերում այդպիսի ծածկաձև գործադրվել է հանրապետության ԳԱ նախագահության սրահում, Հաղթանակի հուշարձանի նախասրահում, Կոնյակի գործարանի դեգուստացիոն սրահում և այլ շինություններում: Ըստ Վ. Հարությունյանի «հեղինակի մտահղացման, տաճարի հատակագծային, ծավալա-տարածական և կոնստրուկտիվ հիմքը քրիստոնեական հավատքի խորհրդանշան խաչն է: Դրա թևերի շուրջը դասավորված չորս խորաններով (ինչպես Էջմիածնի Մայր տաճարում և Հայաստանի վաղ միջնադարյան խաչաձև կենտրոնագմբեթ տաճարների հիմնական տիպում և դրա տարբերակներում), կազմավորվում է տաճարի ողջ ծավալը, հանդիսանում է նրա ճարտարապետական

մեկնաբանման ելակետը…»: Եվ ապա՝ «Խաչը կազմավորվում է 34 մ թռիչքով և իրարից 14 մ հեռավորությամբ տեղադրվող երկու զույգ կամարների հատումով»:

Վերոհիշյալի մեջ առկա են մեկից ավելի թյուրիմացություններ, որոնք և անհնար են դարձնում համաձայնել ինչպես հեղինակ Ս. Քյուրքչյանի, այնպես էլ հարցը մեկնաբանող հանձնաժողովի նախագահի հետ, այսինքն՝ այսպիսի հատակագծով Մայր տաճարի կառուցման հետ, անկախ նրանից, որ նախագիծն արդեն հավանության է արժանացել:

Այն, ինչ տրված է այս հատակագծում, ոչինչ ընդհանուր չունի ինչպես Էջմիածնի Մայր տաճարի, այնպես էլ բոլոր ժամանակների մեր կենտրոնագմբեթ տաճարների հետ: Վերոհիշյալ զուգահեռը նախագծի և մեկնաբանող հեղինակների կողմից բերված է իրենց հայացքների հավաստիությունը երաշխավորելու միտումով. այն, փաստորեն, իրական վիճակը թաքցնելու փորձ է, եթե չասենք խաբեություն:

Մեր հուշարձաններում խաչաձևությունը ստեղծվել է ոչ թե «խաչաթևերի շուրջը դասավորված չորս խորաններով», այլ կիսաշրջան կամ ուղղանկյուն հատակաձև ունեցող բուն խաչաթևերով, իսկապես խաչաձև դասավորված չորս խորաններով: Մինչդեռ այս հատակագծում խաչաձևությունն ստեղծվել է երկու զույգ խաչվող կամարներով ու մուտքերի սրահներով, այստեղ խորաններ ընդհանրապես չկան, այդպիսիք գոյություն չունեն: Անկյունագծով տեղադրված «խորաններ» անվանվածները ավանդատների դերում հանդես եկող, ոչնչով խորան և ավանդատուն չհիշեցնող բազմանիստ, յուրաքանչյուրը 120 քմ մակերեսով երկու սրահներ են: (Ցավոք, նման և այլ թերություններով է օժտված նաև Սպիտակում կառուցվելիք հուշարձան-եկեղեցու նախագիծը (ճարտարապետ Բաղդիկ Արզումանյան), որի մեկ գծագիր էր ցուցադրված վերոհիշյալ ցուցահանդեսում): Հայ եկեղեցաշինության մեջ բոլորովին էլ միևնույն չէ, թե խաչաձևությունն ինչով է ստեղծվում՝ խորաններո՞վ, թե՞ կոնստրուկտիվ տարրերով: Հատակագծում արևելյան խորանը մի ոչ մեծ կիսաշրջան է, կենտրոնում սեղանը, առջևում սեղանաձև պարագծերով մի ընդարձակ

նախախորան, որը հեղինակն անվանում է «բացված խորան», ահա այդ «բացված խորանով» էլ բուն խորանը հեռացված, թաքուն է մնացել աղոթասրահից։

Այդ հատակագծով աղոթասրահը զուրկ է նույնիսկ որոշակի պարագծից, այն կոտրտված արտաքինի ճշգրիտ անդրադարձումն է ներսում։

- Հանձնաժողովի կարծիքով, նոր եկեղեցու կառուցման ժամանակ պետք է «պահպանվեր հայկական ճարտարապետության դասական ոճը, միառժամանակ արդիական նկարագիրը»։ Միթե՞ այդպես չեղավ…

- Հատակագծերում ավանդույթից այսպես կտրվելը իր հետևանքն է ունենում նաև եկեղեցու ներքին տարածության կազմավորման ու կազմակերպման մեջ։ Այդ անդրադարձել է կտրվածքի գծագրում։ Այստեղ ցուցադրված է երկու զույգ խաչվող կամարների հզոր ներկայությունը։ Եթե այդպիսիք 34-40 մ միաթռիչքով միավորում են ներքին տարածությունը կենտրոնական մասի համեմատաբար ցածր նիշերում, ապա միջին բարձրություններում ու վերևում ներքին ընդհանուր տարածությունն անողոքաբար կոտորակում, բաժանում են ինը մասերի։ Եթե միջնադարի հուշարձաններում խաչվող կամարների վրա հենվող թաղածածկը իր բոլոր մասերում հետևում էր կորաձև իջնող կամարաթևերին, ապա այստեղ ամենուրեք հորիզոնական առաստաղ է, որից պոկվելով կրող կամարաթևը իջնում է մինչև հատակ իր ուսերին ունենալով ուղղաձիգ պատեր, որոնք և ներքին տարածության առանձին մասերը պատնեշում են միմյանցից։

Ճարտարապետ Ս. Քյուրքչյանը աղոթասրահը ծածկելով խաչվող կամարների գործադրումով՝ գրում է. «… խաչաձևող կամարների կոնստրուկտիվ համակարգը հնարավորություն է ընձեռնում տաճարի ներսն ազատել ծածկի ավելորդ հենարաններից…»։ Եկեղեցիները ծածկելու համար կենտրոնական չորս սյուները «ավելորդ հենարաններ» չեն եղել, նրանք դարերով հանդիսացել և անվանվել են «գմբեթակիր մույթեր», հնարավորություն են տվել եկեղեցիները պսակել շքեղակուռ գմբեթներով, ինչպիսի հնարավորություն Գրիգոր Լուսավորիչ կառուցվելիք եկեղեցու ճարտարապետին չեն ընձեռել խաչաձևող կամարները։ Գմբեթակիր սյուների

գործադրման ավանդույթը գալիս է քրիստոնեության սկզբներից և նրանց դերը ըմբռնման ենթակա է: Այդ սյուները սրբագործվել են, իրենցով զարդարել եկեղեցու ներքին տեսքը: Այդ սյուները հնարավոր են դարձրել ստեղծել ծածկի այնպիսի համակարգ, որ հավատացյալներն աղոթքն ուղղելով առ Աստված, աչքը քնքշորեն սահեցրել են ծածկի սահուն անցումներով, մտել գմբեթաթմբուկ ու կանգ առնել Աստծո պատկերին, թերևս փառավորվել ներքին բավարարվածությամբ: Ահա այս պատկերն է բացակայում խաչվող կամարներով ստեղծված անհանգիստ առաստաղին: Էլ ինչ եկեղեցի, որ խորաններ չունենալու պատճառով առաստաղի համակարգում չունի ծածկի գմբեթարդ դրվագներ: Ես անձամբ, Էջմիածինի տաճարի ներսը, առավել ևս Անիի Մայր տաճարի ներսը չեմ պատկերացնում առանց գմբեթակիր սյուների, Զվարթնոցն առանց մայր մույթերի. դրանք հոյակերտ շքեղություններ լինելուց բացի, ներքին տարածությունը կազմակերպում են, դասակարգում ըստ նշանակության ու կարևորության: Հռոմի աշխարհահռչակ Սբ. Պետրոսի տաճարը կառուցող հանճարեղ ճարտարապետները, որ քաջածանոթ էին հայ ճարտարապետությանը, իրենց 50 հազար մարդու տարողությամբ տաճարը նախագծելիս նախընտրեցին Էջմիածնի ու Բագարանի չորս գմբեթակիր սյուներով ծածկի համակարգը և ոչ Հաղարծնի սեղանատան խաչվող կամարներով համակարգը: Գմբեթը գմբեթակիր սյուների և փոխանցման համակարգի վրա երևում է բնական, պատկերը հավատ է ներշնչում, որ այդ սյուները ի վիճակի են կրելու տաճարի գմբեթային մասը: Մինչդեռ խաչվող կամարների վրա, սովորաբար, դրվել են լույս անցկացնող փոքր ծավալներ: Մեծաչափ գմբեթ տեղակայելը անբնական տպավորություն կթողնի, թվում է, թե օդում կախված գմբեթը հենարան չունի, պատկերը, անկասկած կլինի ահազդու, այդ մեծ՝ 34-40 մետր թռիչքով կամարները ի վիճակի կլինե՞ն հսկայաչափ գմբեթային համակարգը կանգուն պահել, այն էլ նման բարձրության վրա: Ճարտարապետության, գիտության մեջ նման պատկերը գնահատվում է որպես ոչ տեկտոնիկ-անտրամաբանական:

Նախագծում նույն խաչվող կամարների գործադրման հետևանքով միմյանցից բաժան-բաժան եղած հորիզոնական առաստաղները մշակված են աստիճանաբար

իջնող հատվածներով, որոնց միջև առաջացած ճեղքերում տեղադրված են լինելու էլեկտրական լույսի աղբյուրները, որոնց մշակումը հիշեցնում է էստրադային լուսավորումը, մի բան, որ հատուկ չէ եկեղեցիների լուսավորման դասական ձևերին։

Տաճարի աղոթասրահը ցերեկային լուսավորություն գրեթե չունի, եղած լուսամուտները շատ հեռու են և փոքր լայնության ճեղքերի տեսք ունեն։ Պրոֆ. Վ. Հարությունյանը հանձնաժողովի նկատողությունների շարքում արձանագրել է՝ «տաճարը զրկված է անմիջական բնական լույսից»։

Հայ միջնադարյան հուշարձաններում աղոթասրահները զգալի չափով լուսավորվում են գմբեթների լուսամուտներով։ Ստ. Քյուրքչյանի նախագծած գմբեթային մասը օտարոտի լուծում ունի։ Խաչվող կամարների գագաթում ստացված քառակուսու վրա բարձրացել է մոտ 14 մետր տրամագծով մի խուլ թմբուկ, 6-7 մ բարձրությամբ, առանց պատուհանների, այնուհետև նրա վրա դրվել է մոտ 22-24 մ տրամագծով և մոտ 22 մ բարձրության գմբեթաթմբուկ, ընդամենը ութ նիստերով, յուրաքանչյուրի վրա մեկ լուսամուտ, ձգված համաչափությամբ ոչ կամարակապ, այլ՝ երկաստիճան հորիզոնական բարավորով։ Հասկանալի է, որ այդտեղից ընկած լույսի մի մասը չի թափանցի աղոթասրահ ներքին խուլ թմբուկի պատճառով։

Եթե տաճարի արևմտյան կողմում չլինեին նախագավիթը, գավիթը և նրա երկու կողմերի մատուռները, բուն տաճարի բոլոր չորս ճակատները կլինեին միօրինակ։ Դրանք իրենց կենտրոններում ունեն շքամուտքեր, մուտքերի երկու կողմերում բարձրացող պատերի երկու կողմերում առկա են միանման եռանիստ խուլ պատերով ավանդատների միջին բարձրության ծավալները, որ ունեն ընդամենը մեկական պատուհան, ապա մյուս երկու կողմերի նույնպիսի ճակատների պատերի լայնական հարթությունները, վերևում հովհարաձև վեղարով ութ նիստեր ունեցող գմբեթը։ Այս անհրապույր պատկերը արևմտյան կողմից մի քիչ աշխուժացնում են երկու մատուռները, որի ճարտարապետությունը մեծի փոքրապատկերն է։

Ճակատների վերաբերյալ հանձնաժողովի կարծիքը հետևյալն է. «Անհանգստություն է առաջացնում արտաքին ծավալներում ազատ կանգնած պատերի առատությունը, որը խաթարում է հորինվածքի ծավալատարածական ըմբռնումը»։

- Եթե համեմատեք Զվարթնոցի հետ…

- Մինչդեռ այս շինությունը Զվարթնոցի գրեթե կրկնակի լայնությունն ունի, սրա գմբեթում միաժամանակ կարող են տեղավորվել Էջմիածնի, Հռիփսիմեի, Գայանեի և Շողակաթի գմբեթները։ Բայց արի ու տես, որ մոտ 22 մետրից ավելի տրամագիծ ունեցող այս գմբեթը ընդամենը ութ նիստ ունի, յուրաքանչյուր նիստի լայնքը մոտ ութը մետր է, իսկ բարձրությունը 15-16 մ։

Զվարթնոցի 11 մ արտաքին տրամագծով գմբեթը 16 նիստ ունի, յուրաքանչյուր նիստի լայնությունը 2.9 մ է, բարձրությունը 7 մ։ Քյուրքչյանի եկեղեցու նախագծի մոտավոր պատկերն է ներկայացնում Պետերբուրգի Իսահակիևյան տաճարը։ Այն որոշ տարածության վրա դիտելիս թվում է միջին չափերի շինություն, նրա այունազարդ կենտրոնի աջ և ձախ կողմերի մեկական պատուհանները իրենց պատկերով չեն տարբերվում սովորական պատուհաններից, մինչդեռ այդ շինությունը հսկայական բարձրություն ունի (մոտ 100 մ), իսկ հիշյալ պատուհանների բարձրությունը հասնում է երկուսուկես հարկանի շենքի բարձրության (մոտ 8 մ)։ Ահա այս անմասշտաբայնության կամ կեղծ մասշտաբի գործադրման պատճառով շինությունը չի ընկալվում ռեալ չափերով։

Համաձայն հանձնաժողովի նախագահի «Վերջնական ընտրության համար հիմք ծառայեց մրցույթի նախապայմանը՝ [եկեղեցին պետք է լինի] հայկական ճարտարապետության դասական ոճով, միաժամանակ արդիական նկարագրով»։ Ստացվում է նաև, որ Վեհափառ Հայրապետը գոհացել է նախագծով, վերոհիշյալ պատերի վերացումով։

Որքան մեզ հայտնի է, Վեհափառին է պատկանում «Այս ի՞նչ է, եկեղեցի՞ է» արտահայտությունը։ Վեհափառի այդ արտահայտությունը մեզ հուշում է, որ նա այլ կարծիք է ունեցել։ Մինչդեռ հանձնաժողովի նախագահի կարծիքով, «Ստ. Քյուրքչյանի

նախագիծը բնորոշ է խիստ արդիականությամբ, ազգային նկարագրի համարյա բացակայությամբ, այն աստիճանի, որ եկեղեցին հասարակական շենքի ընկալում ունի»։ Ինչ վերաբերում է նախագծում առկա թերություններին, ապա իմ կարծիքով, պետք է համոզվել, որ դրանք հնարավոր չէ վերացնել «տեխնիկական նախագծման ընթացքում»։

Հաստատ է մի բան, որ բացառությամբ մի երկու դրվագից, հաստատված նախագծում հայեցի ոչինչ չկա և չի էլ կարող լինել տվյալ նախագծի որևէ մշակումով։ Սրանում բացակայում է մեր տաճարներին հատուկ միասնականն ու մոնումենտալը՝ թե տաճարի դրսում, թե ներսում։ Էլ ու՞ր մնաց հայ դասական ճարտարապետության ոգին կամ ոճը։

Եթե համաձայնեք տվյալ նախագծով շինությունը համարել եկեղեցի, ապա ամեն շինության վերևում կարելի է ամրացնել խաչ և այն անվանել եկեղեցի։ Սակայն հայկական եկեղեցիներն այդպես չեն եղել, նրանց տեսքն անգամ ներշնչող է եղել, դրա համար էլ սուրբ են համարվել եկեղեցու ներսի ոչ միայն խաչերը, այլև շենքն ամբողջությամբ։ Իրական հավանության արժանացած նախագիծը անսպասելի մեծ չափեր է ընդունել, իր մեջ առնելով եկեղեցու հետ կապ չունեցող այլ հարամասեր, որ կարող էին չլինել, դրանով էլ եկեղեցու իրականացումը չդարձնելով տասնյակ տարիների գործ։ Զվարթնոցը, որ մեր կենտրոնագմբեթ տաճարների շարքում ամենամեծն է, քառակի անգամ փոքր է նոր նախագծով կառուցվելիք շինությունից։

Բանն այն է, որ հանձնաողովի անդամներին չեն մատուցվել ներկայացված նախագծերի տեխնիկական, գեղագիտական բնութագրերը՝ մշակված հատուկ ընդդիմախոսների կողմից։ Տվյալ դեպքում կարճառոտ նիստերի տևողության ընթացքում դժվար է եղել ճիշտ կողմնորոշվել և ճշմարիտ որոշման գալ։

- Իսկ միթե՞ մրցույթի համակողմանի քննարկումներ չեն եղել…

- Մրցույթի ներկայացված նախագծերի լայն հասարակական քննարկում չի կազմակերպվել։ Առաջնություն է տրվել առաջին հայացքից դրական կողմեր ունեցող նախագծերին։

Հանձնաժողովի կողմից պատշաճ ուշադրության չեն արժանացել որոշ մասնագետների ներկայացրած նախագծերի վերաբերյալ բնութագրերը։

Հանձնաժողովի նախագահ Վ. Հարությունյանը հիշատակված հոդվածում գրում է, որ նախագծի ընտրությունը կատարվել է «…ուշադիր ու բազմակողմանի ուսում-նասիրության միջոցով, ապագա սերունդների նկատմամբ պատասխանատվության բարձր զգացումով»։ Պետք է խոստովանել, որ հոդվածագրի այդ հավաստիացումը մեզ չի համոզում, իրերի իրական վիճակը այդ չի հաստատում։ Տվյալ դեպքում մենք ուզում ենք խոսքը կենտրոնացնել ոչ այնքան մրցույթի արդյունքների, այլ ընտրված նախագծի վրա, նրա արժեքավորմանը և այն կառուցման երաշխավորելուն։

Հանձնաժողովը նկատել է նախագծում առկա թերությունների զգալի մասը, սակայն այդ բոլորը մատնել է անուշադրության և «լիովին հավանություն է տվել նախագծին»։ Ահա այս հանգամանքը մեզ իրավունք է տալիս գալ տրամագծորեն հակառակ եզրակացության, որ նախագծի գնահատման, արժեքավորման, տվյալ նպատակին համապատասխան լինելու գործում հանձնաժողովը, առավելապես Մայր Աթոռին մոտ կանգնած Գ. Խանջյանը և ճարտարապետական բաժնի ղեկավար Վ. Հարությունյանը, ցուցաբերել են ոչ միայն լիբերալ, այլ ուղղակի անպատասխանատու գործելակերպ, Մայր Աթոռին առաջարկել են մի նախագիծ, որով Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին չի կարելի կառուցել։ Դա եկեղեցու, այն էլ հայկական եկեղեցու նախագիծ չէ։

- Իսկ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար ունե՞ք այլ առաջարկ։ Ելքը ո՞րն է։

- Ստեղծված իրավիճակը թելադրում է առավել ուշիմ լինել համառորեն պնդվող այն առաջարկի նկատմամբ, որը ապահովաբար գործն ուղղում է դեպի ճշմարիտ որոշման, այն է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը կառուցել Թորամանյանի վերակազ-մությամբ։

Ս. Գրիգոր Լուսավորիչը Զվարթնոցի նախագծով կառուցելու հակառակորդ-ները փաստարկում էին, որ այն փոքր է և չի կարող տեղավորել 2500 նստատեղ։

Հետագայում համոզվելով, որ իրոք այդ ուռճացած թիվ է, համաձայնեցին 2000 նստատեղով աղոթասրահ ունենալու գաղափարին, ի վերջո գրավոր առաջադրանքում արդեն 1500 տեղը համարվեց բավարար։ Ավելին, հավանության արժանացրին այն նախագիծը, որում նստատեղերի թիվը իջեցվել, հասցվել է 900-ի։ Այս դեպքում հնարավոր էր վերադառնալ եկեղեցին Զվարթնոցի նախագծով կառուցելուն, չէ՞ որ Զվարթնոցն ի զորու է տեղավորել 900 նստատեղ և մոտ 1500-2000 ոտնկայս աղոթողների։ Պետք է հնարավոր համարել Զվարթնոցը նույն համաչափությունների պահպանումով ընդարձակել 1.20-1.25 գործակցով, նրանում տեղավորելով ավելի մեծ քանակի աղոթողներ։

Ես գտնում եմ, որ եկեղեցու մեծ կամ փոքր լինելու գաղափարը հարաբերական է, մեծ տարողության եկեղեցիները սովորական օրերին մասամբ դատարկ կլինեն, իսկ կարևոր իրադարձությունների օրերին ի վիճակի չեն լինի տեղավորել ներսում գտնվելու բոլոր ցանկացողներին, ըստ որում, այդ ցանկացողները կարող են լինել 10 հազար, 50 հազար գուցե նույնիսկ 100 հազար մարդ, հետևաբար հնարավոր չէ եկեղեցին կառուցել այդ թվերը նկատի ունենալով։

Ի դեպ, դեռևս 1989 թ. Արարատյան թեմի Մայր եկեղեցի կառուցելու համար հատկացված հողամասը համարվում էր բավարար չափերի, մանավանդ, որ կառուցվելու էր Զվարթնոցի նախագծով։ Հետագայում զգացվեց, որ մի ողջ համալիրի կառուցման համար այդ տեղանքը ակներևորեն փոքր է։ Զգացվեց, որ այդ տեղանքը պակաս հարմարավետ է, քաղաքաշինության առումով նույնիսկ ոչ թույլատրելի։ Այն շատ մոտ է «Այրարատ» երկդահլիճ կինոթատրոնին, որի տարողությունը մոտ 3500-4000 մարդ է, մոտ է Մանկավարժական ինստիտուտի ողջ համալիրին, մետրոյի «Զորավար Անդրանիկ» կանգառին։ Մի տեղում բնակչության այդպիսի կուտակումը (մոտ 10-15 հազար մարդ) մի քանի առումներով անվտանգ չէ։

Տվյալ տեղանքը նաև սահմանափակ է եկեղեցուն անհրաժեշտ, հարմարավետ կառուցապատման համար, այն որպես հիմնատակ զգալի ծանրության շինության համար անբարենպաստ է երկրաբանական առումով։

Հետևաբար, եկեղեցին կարելի է կառուցել Երևանյան լճի արևմտակողմում, որը ընդարձակ տարածություն է, արարատյան համայնապատկերի դիմաց, այն ճանապարհներով ու քաղաքային տրանսպորտով կապված է քաղաքի բոլոր թաղամասերին, սպասարկման առումով կենտրոնական դիրք ունի և գտնվում է մայրաքաղաքի «օդային մուտքի»՝ օդանավակայանի ճանապարհին:

Հ. Գ. Ժամանակը բարեպատեհ առիթ է ներկայացրել մեզ կառուցել Մայր եկեղեցի: Այստեղ իրենց խոսքը պետք է ասեն ոչ միայն Մայր Աթոռին մոտ կանգնած փոքրաթիվ մտավորականներ, այլև մեր հասարակության լայն շրջանի ներակայացու-ցիչներ, որպեսզի բացառվեն հնարավոր պատահականությունները սույն կարևոր գործում: Մեր կարծիքով, այսօր Ամենայն Հայոց կաթողիկոս ՆՍՕՏՏ Գարեգին Ա-ին է վերապահված լուծել ինչպես տեղանքի ընտրության վերանայման, այնպես էլ նախագծի հարցը, Զվարթնոցի, թե մի այլ նախագծով կառուցելու հարցը…

«Լրագիր օր», 18-20 հունվարի 1996 թ.: